

LE DANUBE

LE DANUBE

ՀԱՆՊԻՏԱ ԵՐՈՍՈՐԵԱՅ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 բուլլարի թղթադրամ:

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 բուլլարի թղթադրամ:

Փոստի ծախքը խմբագրություննս կը վճարէ:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է: Հայերէն Պուլկարեւելն եւ Ֆուսսսերէն լեզուով:

Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'արուիր:

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցեով:

M. S. TUTUNDJIEFF

Rédacteur du journal "TANOUP"

(BULGARIE)

ROUSTCHOUK

ՊՈՒՔՐԵՆԵ

Պուլքէշ Ռօմանիոյ թագաւորութեան մայրաքաղաքն է ունի 250 տուն Հայ, եւ կամ 863 հոգի արու եւ էգ, մեծ ու փոքր, ըստ պատմութեան հնախօսութիւն 8. Հ. Գուկասու. կիմանամք թէ տեղւոյս գաղթական Հայեր Գանուբ գետի ափանց վերայ գտնուած քաղաքներէ եկած են Քրիստոսի 1601 թուականին. (Ռուսուգ եւ Սիլիստրայէն):

Աստ ունինք մի եկեղեցի Սուրբ Հրեշտակապետ անուամբ. շինեալ 18րորդ դարուն սկիզբները. եկեղեցւոյ բակի մէջ կը գտնուի Միսիստրայէն արական վարժարանը ունինք նաեւ իգական սեռի յատկացեալ Սրբաբաւեան օրիորդաց վարժարան, անուամբ:

Ունինք երկու Քահանայ մին Աւագերէյ Արժ. Տ. Յարութիւն Քահանայ Անդրէասեան Պապատաղցի. իսկ միւսը Արժ. Խաչատուր Քահանայ Մոսկովեան Պօլսոյ (Ե՛՛՛՛ Գ. Բ. Բ.) Քարողիչ են. չ'կայ:

Եկեղեցին ունի 22 հազար ֆրանք տարեկան եկամուտ ուր Ազգ. կարուածներէն կը մատակարարուի Հոգաբարձութեան կողմանէ որ կ'ըստի (Ե՛՛՛՛ Գ. Բ. Բ.) սոքա 7 հոգիէ կը բաղկանան որոնցմէ երկուքը միայն կառավարութեան կողմէ կ'ընտրուի Ասենապետ եւ Գանձապետ, այս վերջինք Ժողովրդեան

քուէով ընտրուելով անունները կառավարութեան կը հաղորդուի պաշտօնապէս վաւերացնելու համար: Վարժարանք հոգաբարձութեան ձեռօք կը հոգայուի գարձեալ կարուածներէ հասցիով, արական վարժարանի մէջ կ'աւանդուին Հայերէն լեզուն եւ Պատմութիւն, Հայաստանի Աշխարհագրութիւն Խրոսթիաութիւն Կրօնք եւ գիր. Ռօմանիէն (ըստ կառավարութեան կողմանէ արուած բրօքրամով) լեզուաւ Աշխարհագրութիւն. Քաղաքագիտութիւն. բնական ուսումն. երկրաչափական սկզբունք. թուարանութիւն. Կրօնագ. եւ գծագրութիւն: Իգական վարժարանի մէջ կ'աւանդուին Հայ. ընթերցանութիւն, Քրիստոնէական, գրավարժութիւն Ազգ. Պատմութիւն, Աշխարհագրութիւն Հայաստանի, Ռօմանիէն լեզու ու ձեռագործութիւն:

Արական վարժարանի աշակերտաց թիւն է 37. 9ը Հայ իսկ 28 Ռօման. Իգական վարժարանի աշակերտահետց թիւն է 27. 13 Հայ 11 Հրեայ 3 ալ Ռօմանուհի: Արական վարժարանը ունի երկու ուսուցիչ, Հայերէն ուսուցիչն է պ. Յ. Պ. Պիպեռնի: Իսկ Ռօմաներէնի դասատուն է պ. Ալէքսանդր Նէկրիչան, Պուլքէշի: Իգական վարժարանի Հայերէնի դասատուն է Արժ. Տ. Յարութիւն Քահանայն իսկ Ռօման լեզուի օր. Լէշնա Տիմիթրէսքու, ցաւօք սրտի կ'ըսեմք թէ այս

քաղաքի Հայեր բացարձակ իրենց անպատուութիւն մը համարեն Հայ լեզուն սովորելու և խօսելու գրեթէ բոլորին ալ անունները ուղահերէնի են դարձուցած. Գրիգորը եղած է Կրէկոս, Յովհաննէսը Իվան, Նիկողոսը Նէպոլէն ևն:

Օտար վարժարանները կը յաճախեն Հայ տղաքներ, նշանաւոր են վաճառականական իրաւաբանական և բժշկական վարժարաններն, յաճախող Հայ ուսանողք, սոքա նուազ բացառութեամբ, յաջողեն միշտ:

Բաւական վաճառական և արհեստաւորներ ունինք աստ այլ և այլ երկիրներէ գաղթած. գործարանատէր Հայեր չունինք բայց միլիոնատէր և կալուածատէր Հայեր չեն պակսիր:

Նշանաւոր են ըէփի մէջ եղող Հայ պաշտօնեայք թուով 4-5. ունինք Կառավարութեան Ազգային ժողովոյ անդամ, պ. Պըյըքէան. քաղաքապետութեան և ներքին գործոց Նախարարութեան պաշտօնատան, մաքսատան ու երկաթուղւոյ կայարանաց մէջ բազմաթիւ Հայ պաշտօնեայքներ կը գտնուին:

Տեղական Կառավարութիւնն հաշտ է Հայոց հետ և կը վարուի որպէս Բումէն, սակայն ժողովուրդը Յունական յատուկ հին մոլեռանդութենէ աւանդ մնացած վատ զգացումներ կը տածէ Հայոց մասին:

Քաղաքիս մէջ ընկերութիւններ կային երբեմն. Արարատեան, նպատակն էր տեղւոյս աղքատաց օգնել ձմրան եղանակին փայտ, ևն տալ. Ընթերցասիրաց ընկ, ևն. սոյն ընկերութիւնք իւրեանց նպատակներով օգտակար իսկ եղած են սակայն չեն շարունակուած: Կար նաև Ֆէլաթթէ անուն մի ընկերութիւն Հայոց. այս ընկերութիւնը կազմուեցաւ պ. Մ. Մարքովիչի ձեռամբ և լուծուեցաւ դարձեալ իր ձեռքով: Այժմ կայ հաստատուն մի ընկերութիւն «Խնայողասիրաց ընկերութիւն երիտասարդաց Պուքրէշու», որոյ նպատակն է իւրաքանչիւր անդամի ամսէ ամիս վճարած բաժնեգին 5 ֆրանքն շահեցնել. տոկոսով ևն, և շահը բաժնել իրենց մէջ երբ կը լրանայ չըջանալ: Ասի չափահասներէ բաղկացեալ է. պատանեկան ընկերակցութիւնք կը պակսին աստանօր:

Այս տեղ ալ բաւական պանդուխտներ կը գրանուին որոնց մեծ մասը Տիգրանակերտի Հայնեցի են. կ'ըբաղին հացավաճառութեամբ և շաքարավաճառութեամբ, կան նաև Կեսարացի, Կ.Պօլսեցի, Ռօտոստոյի, Ատաբազարցի (կօշկակար), Բէմախցի

ևն. չի մոռնանք ըսել թէ Հայնեցիներ ընդհանրապէս բողոքական են, 4-5ը միայն վերադարձած են Ս. Լուսաւորչեան Եկեղեցւոյ գէրկը: Այս պանդուխտք կը շահին օրական 3-5 ֆրանք. և կարող են ապրիլ օրական 1-2 ֆրանքով:

Մօտակայ գիւղերը և քաղաքները տեղւոյս քահանայք կ'երթան եթէ պէտք լինի:

Սնցելոյն մէջ նշանաւոր եղած են «Արշակունեան», «Սէր Յիսուսի» անուն երկու ընկերութիւններն, որք արդի կալուածներն թողած են ազգին. Միսաք Ամիրային որդին աղա Վարդերէս հիմնադիրն է եղած քաղաքիս Միսաքեան վարժարանին, հոգեւոյս Կարապետ Հանուշ որ 100 հազար ֆրանքի մօտ դրամ կը կտակէ ազգին, բայց զըրեթէ 25 հազարը հաղիւ ազգին սնտուկը մտնելու բարեբաղդութիւնը կ'ունենայ. մնացորդը տեղւոյս աղաները կը դրպանեն ազգասիրաբար ասկից 7-8 տարի յառաջ:

ԹԱՐԱԿՅՈՒԹԻՒՆՔ

ՎԱՌՆԱ 25 ՓԵՏՐ. 1892

... ԽՄԲԱԳԻՐ

Կուգամ յանուն Վառնայի երիտասարդութեան խնդրել որ բարեհաճիք սոյն երկտողս հրատարակել «Դանուբ»ի մի անկեանը մէջ:

Այժմ Վառնայի բնիկ Հայ երիտասարդութիւնը զրեթէ կազմալուծեալ վիճակ մ'ունի, հակառակ այն ոգեւորութեան, որ մի քանի տարի առաջ կը ախրէ եղեր աստ: Բայց դժբաղդաբար երկու տարիէ 'ի վեր. ցորչափ գիտեմ, ազգասիրական ճրգտում մը, յառաջդիմութեան քայլ մը չէ նշմարուած Վառնացի ազգայնոց կողմէ. գոգցես մէն մի անհատ ետութեան, իմաստակութեան և միևնոյն ատեն գերեզմանային անտարբերութեան քառան է ընկղմած, թէպէտև նախորդ տարւոյ սկիզբներն եթէ ոչ գործող գէթ չոր ազգային խօսքեր ընդներ կը գտնուէին, բայց այն ալ այնպէս ինչպէս ըսաւ մի ատենաբան պարոն 'ի լուր ամբողջ Վառնացւոյն «Այս քաղաքի մէջ ազգասիրութիւնն միայն գինետանց, սրճատանց և ժողովրդական զբօսավայրերու մէջ կը յայտնուի այն պարոններէ» որք երբ ըմպելեաց բաժակն 'ի ձեռին ունին ու Բագոսի կը խնկարկեն. կամ երբ խօսելու նիւթ կը պակսի իրենց, առ 'ի զուարճութիւն ազգային խնդիր մը կը բանան իբր պատրաստ մի նիւթ

և կ'սկսին քննադատութեան ազգին գործիչներու դէմ:» Բայց դա անցեալ տարւոյ ընթացքում ուրախալի է տեսնալ մի քանի ոչ ընդհանրապէս պարտնէրու ջանասիրութիւնն ու ճիգն առ 'ի ըսթափումն տեղացի ազգայնոց, զի դժբա հաստատեցին մի Հայկական ընթերցարան և մի թասուրական ընկերութիւն որ ոչ նուազ զարկ մը տուաւ ընդհանուրին. և որ ապագայ .յոյս մը կը խօստանար Վառնայի Հայութեան, այլ աւագ սախիստ կարճ աւեց տեղացւոց անտարբերութեամբն ամբողջ ծանրութիւնն մի միայն 2-3 երիտասարդաց ուսին վրայ մնալովն. և 'ի վերջոյ բոլորովին գործէ դադարեցաւ այդ միութիւն, երբ իւր անդամոց մին (պ. Ս. Գ.) հետեւեալ խաբէութեան զոհ գնաց: Այսինքն Կ.Պոլսէն Ռումանիա անցնող շէնքով շնորհքով մի պարոն (Վ. Մ.) բազմիցս թախանձանք յաջողեցաւ համոզել (պ. Ս. Գ.) զպարոնն և 13 կամ 20 օրէն վերադարձնելու խօստամամբ թատերական հին և նոր գոյքերն 'ի ֆէօստէնճէ առ ինքն փոխադրել տալ ու մինչև ցարգ Ռումանիոյ, Մոլտաւիոյ և Հունգարիոյ այլ և այլ Հայաբնակ քաղաքներն չընթացելով իր անձնական շահուն համար թատերական ինքնակազմ խմբովն ներկայացումներ տալով, Վառնայի ազգագուտ միութեան հասոյթից միակ աղբիւրն եղող թատերաբեմն կոչուածեալ և փակեալ թողուց ամբողջ մի տարի: Տէր-Խմբագիր մեզ մը խիթարական պիտի ըլլայ տեսնել որ մեր ազգի մէջ ճշմարիտ ազգասէրներու թիւն կեղծ ազգասիրաց թւոյն հետ գէթ 5% համեմատական գար: Այսօր այսչափ գրելով կը խօստանամ 'ի ներել զբազմանցս տեղոյս և չընակայ քաղաքաց տղգային կեանքն ու կայութիւնն հաղորդել Ձեզ:

ՎԱՀԱԳՆ

Կ.ՊՈԼԻՍ 29 ՓԵՏՐ. 1892

Պէշիքթաշի Քարոզիչ Նար-Պէյ Սրբազանի մալինս բացուցիչ տեղեկութիւններ գրած եմ Փետրուար 10ի նամակովս, մի և նոյն ժամանակ խընդրելով որ չը հրատարակուի զայնս, որովհետեւ անկարեւոր կասկածներ կը համարէի զայնս. Լուսինեան Արքեպիսկոպոսի նկատմամբ, բայց տեսնելով որ հետզհետէ արտառոց տեղեկութիւններ կը հրատարակուին շատ մի Հայ թերթերու մէջ, ստիպ-

ուեցայ գրել երկրորդ անգամ՝ սա մի քանի տողերն: Նար-Պէյ Սրբազան բնաւ յեղափոխական նպատակներով չէ ապրած այս մի քանի տարիներու մէջ, նա չէ ունեցած յարաբերութիւն իւր եղբորորդւոյն Լեոն Պէյի հետ, և Օսմանեան Կառավարութեան գաղտնիքներն հաղորդելու դիտաւորութեամբ Լեոն Պէյի հետ ունեցած յարաբերութեան արդիւնքն եղող նամակներ սոսկ մտերմական եղած են. և թէ Կառավարութիւնն ասկէ ամիսներ առաջ մինչև մէկ աստիճան տեղեկութիւն ունենալով ատոր վրայ արգիլել ուզած էր և զայդ յարաբերութիւն. Նար-Պէյ Արքեպիսկոպոս իմացնելով հանդերձ թէ կը վերջայնէ իր թղթակցութիւնը չէր դադարեցուցած վերջնականապէս իւր նամակներն, յետոյ Վ. Նազրմ Պէյի անմարսելի երեցած էր այս արարք և Նար-Պէյի աննշան անկում այդկից յառաջ եկած է. արդարեւ իւր մէկ նամակ Կառավարութեան ձեռք անցած է, սակայն մտերմական է և ուրիշ ու է վնասակար պարունակութիւն չ'կրեր զայն:

Մեր Եւրոպական Հայ թերթեր համամիտ չենք գտնել այս կեանքի վրայ, ամեն ոք իւր թղթակցութեան զոհուած կը տեսնենք, և ուրախ ենք որ «Թայմզ», «Թան», ևն. Եւրոպային նշանաւոր թերթեր ամենքն ալ միեւնոյն տեղեկութիւններն կը հաղորդեն իրենց ընթերցողաց, թողունք միւս թերթեր որոնք գրեթէ առ հասարակ միեւնոյն ոգւով կը խօսին Պէշիքթաշի տարաբաղդ քարոզչին վրայ: Մեծ պահոց առթիւ, Պատրիարքարանն ուզեց մի երկրորդ քարոզիչ անուանել (ընթերցողք գիտեն թէ Սափրիչեան Տիմաթէոս Եպիսկոպոսն որոշուեցաւ նախ) սակայն տեղոյն թաղ խորհուրդն ինչպէս առաջինին նոյնպէս և երկրորդին անընդունելի լինելնին իմացուց Պատրիարքարանին:

Շ. ԿՈՄՍՈՐՈՒՄՆ

Կ.ՊՈԼԻՍ 29 ՓԵՏՐ. 1892

Կաթողիկոսութեան ընտրութեան ժամը տհաւ եկած հասած կը համարուի: Ամեն վիճակ պէտք է ընտրած լինէր իւր ընտրողները, որոնք երթալով 'ի Ս. Էջմիածին պիտի ընտրեն ամենայն Հայոց Հայրապետը:

Որքան որ մեր Ռուսահայ եղբարք սկսած են ընտրել իրենց վիճակի ներկայացուցիչները սակայն Թուրքիոյ Հայոց մէջ առ այդ ու է ձեռնարկ չէ տեսնուած դեռ: Շատ գիւրին է երեւակայել թէ

մեր այս աստիճանի անտարբերութիւն ինչ ազե-
տից կարող է ծնունդ տալ:

Այլքեան Խորէն Պատրիարք աւելի խոհեմութիւն
ըրած կը լինէր եւր իջմիածնէն հրաւիրագրերը
ստացածին պէս զրկեր իրենց սրտեալ հասցէնե-
րուն իբր օրինական պարտականութիւն և այն ժա-
մանակ չեմ կարծեր որ մէկը կարենար գիտադու-
թիւն մը ընել: Սակայն այս ամենքը կարենալ ը-
նելու համար յայտնի բան է որ պէտք եղածը կը
պակսի իր մօտ, ուստի ստիպուած եմք միայն սպա-
սել և գործին վերջը տեսներ:

Գամք սա կէտին թէ, Պուլկարից և Ռօմանից
Հայք որ վիճակ մը կը կազմեն պիտի մասնակցին
ընտրութեան, եթէ այո, — որ բնական է — ինչպէ՞ս
կամ ինչ՞եղանակաւ: Ռօմանաբնակք Հայտի ուզեն
որ Պուլկարաբնակք կապտեն իրենց իրաւունքը, նը-
մանապէս Պուլկարաբնակք, ուստի օրինաւոր կը լի-
նէր եթէ մին կրօնականը և միւսը աշխարհականը,
ընտրէ բայց այդ ալ դժուար է որովհետեւ ոչ
մին, և ոչ միւսը պիտի կարենայ ինչ քիչ օրինա-
ւոր կրօնական մը ընտրել, հետեւաբար հարկ կը լի-
նի միաձայն հաւանութեամբ կրօնական ներկայա-
ցուցիչ ճանչնալ վիճակին նորընտիր առաջնորդն
որ երկու կողման առաջնորդն լինելով խիստ լաւ
արժանաւորութիւնն ալ ունի, կը մնայ աշխարհա-
կանը:

Այդ անձ պէտք է ճանաչուած լինի իւր անց-
եալով երկու կողմանէ ալ, և ինք լաւ սերտած մեր
Եպիսկոպոսաց բարոյական կեանքը, մանաւանդ,
անոնց որոնց վրայ աւելի շատ կը խօսուի այսօր,
այդ անձ պէտք է որ կոյր հաւատք ունեցող մէ-
կը լինի ու է Եպիսկոպոսի մը վրայ: Մեր Պուլկա-
րաբնակ և Ռօմանաբնակ եղբարք ազատ երկրի մէջ
ապրելով ամօթ է իրենց երբ մի պահպանողական
անձ ընտրեն, անշուշտ կ'զգան թէ ինչ տեսակ
անձնաւորութիւն պէտք է բազմի ներկայ տադ-
նապալի պարագայիս մէջ այդ բարձր գահուն վը-
րայ՝ քանի որ իրենք մեզնէ շատ աւելի դիւրաւ
կ'իմանան Ազգին ցաւերն և վիշտերն: Եւ աւելի ընդ-
լայնելով խօսքս ըսեմ նաեւ թէ՛ ոչ միայն Պուլկա-
րաբնակք և Ռօմանաբնակք պէտք է հետեւին իմ
անկեղծ առաջարկութեանցս, այլ նաեւ ամբողջ Հա-
յութեան այն մասը որ կ'զգայ և կ'իմանայ:

Վերջացնելէ առաջ մեր խօսք աւելցնեմք նաեւ
թէ պէտք է աշխատիլ ամեն ճիգ թափել ընտրել
կաթողիկոս ամենայն հայոց Թուրքիոյ Եպիսկոպոս-
ներէն:

Ահաւասիկ անուանքն արժանաւորագունից 'ի
Հայրապետութիւն:

Գեր. Տ. Խորէն Ս. Արք.—Եպիսկոպոս Նար.—Պէ.յ.

„ „ Ստեփաննոս Եպիսկոպոս Յովակիմեան

„ „ Մատթէոս „ Իզմիրլիեան:

ՎԱՐՍՁԴԱՏ

Կ Ը Ձ Ա Ռ Ա Ն Յ Է Ա Ր Դ Ե Օ Ք

Մի քանի օրեր 'ի վեր անձնական գործերով
'ի Մարտէյլ գտնուելով ուզեցի անպատճառ տես-
նել մեր հոշակաւոր պ. Մ. Փոլթուզաբեանը, ու-
րովհետեւ ինձ համար անկարելի էր ցորեկ ատեն
հեռանալ գործէ և գիշերն ալ անպատեհ, պար-
տաւորեցայ շաբթու մէջ օր մը առաւօտուն կա-
նուխ երթալ այցելութեան:

Թէեւ յառաջուց իմացած էի իւր հասցէն, բայց
այն տեղ հասնելով աւելորդ չի սեպեցի ծանօթ-
ներէս պ. Մ. Բ. . . ի հարցնել՝ նրա բնակութեան
տեղը. նա ցոյց տուաւ ինձ և տանը վրայի թուա-
նշանը արտասանեց. ես մտայ ներս:

Մարդ չ'կայ արդեօք. . . բայց ո՛չ, ահաւասիկ
մէկը որ անշուշտ ինք պէտք է լինի. կ'երևայ թէ
կը քնէ, գրասեղանին առջև կ'ոնակը դռան դար-
ձուցած և գլուխը իր երկու թևերուն մէջ առած,
սակայն զարմանալին այն էր, որ գլխուն վերև
կախուած լամպան դեռ վառ կը կենար. 'ի հար-
կէ քնոտ եղած պէտք է լինի: Իմացա՞ւ արդեօք
ներս մտնելս:

Պարոն. . . ներեցէք համարձակութեանս — ա-
մենեին. . . ամենեին. . .

— Բայց ներողութիւն:

— Անկարելի է. . . կ'ուզէի. . . — ո՛չ, ո՛չ, դու
զիս խայտառակեցիր. ա՛հ, այո՛, այո՛, խայտառակ
եղայ. դու հաւատք չ'ունիս իմ վրայ, ես մեծ
եմ. . . ամեն Հայ իր յոյսը իմ վրայ դրած է. . .

Ինչ, կը զաւանդէ՞ արդեօք, նախ կարծեցի թէ
այդ խօսքերը ինձ կ'ուզուին, բայց մտածելով
թէ նա ուսկի՞ց պիտի գիտնայ թէ ներս մտնողը
ես էի, և եթէ ուղղակի ինձ ալ լինէն այդ խօս-
քերը. ինչ իրաւամբ, ուստի հասկցայ թէ կը զա-
ւանդէ: Ես անշարժ սենեկի մէջ տեղ կը կենայի
նա դարձեալ սկսաւ ինքնախօսութեան:

Վերջապէս. . . կարծեմ այլ ևս. . . անհնար. . .
պիտի լինի. . . իմ գործս յառաջ տանիլ. . . ո՛հ. . .
անիծեա՛լ ճշմարտութիւն, վերջապէս իմ գոր-

ծերն ալ... երեան հանե... բայց պարտն... խր-
նայէ... խնայէ... հարուածներդ շատ ուժգին
են... Եթէ կ'ուզէք... բայց ինչ կ'ըսեմ. ո՛չ, ո՛չ,
գիտեմ չէք ընդունիր... մի առաջարկութիւն ու-
նիմ... ա՛հ խնդրեմ 10% ին... ո՛չ պիտի կուտիմ
քեզի հետ... մինչև վերջին շունչս... :

Այս վերջին բառերը արտասանած ժամանակ,
տեսայ որ ձայնը կը դողդողայ, ես հետաքրքիր ե-
ղայ, կ'ուզէի անպատճառ հասկնալ գաղտնիքը.
արդեօք ո՞վ էր կամ ինչ բան էր իրեն այս աս-
տիճան յուզուող, անշուշտ հեռագիր մը և կամ
նամակ մը ստացած պիտի լինէր և այդ ալ 'ի հար-
կէ իւր գրասեղանին վրայ պիտի ըլլար. ուստի
մի քանի վայրկեանի համար քաղաքավարութեան
պահանջները մոռանալով սկսայ ոտքիս մասների
վրայ կոխելով յառաջանալ տեսներու համար այդ-
անիծեալ և իրեն համար հրեշային թուղթը, բա-
ցի մի քանի «Հնչակ» և մի «Ասպարէզ» ոչինչ
տեսայ. և քայլերս դէպի դուռը ուղղելու մօտ էի
գետինը թերթ մը տեսայ, ճըմռթկած ու կէսէն
պատռած. վեր առիւ. յուսալով թէ գաղտնիքը
անպատճառ այդ պիտի լուծէ, և ճիշտ ալ այնպէս
նախ հասկնալու համար թէ ինչ թերթ է, բացի
և ճակատը կարգացի «ԴԱՆՈՒՐ», խնդիրը արդէն
լուծուած էր, մանաւանդ՝ այդ «Դանուբ»ը որ
բնաւ յանցանք չունի, առնելով դուրս ելայ ու
ճիշտ մէջտեղը կարգացի մեծ տառերով սա խո-
րագիրը:

ԱՌ ԻՆՔՆԱՍՈՉ ԴԵԿՏԱՒՈՐՆ Ի ՍՊԱՆԻԱՍԱՆ
ԴՂԵԿԻ
Մ. Լ. Լ.

92 ՓԵՏՐ. 16/28

ԱՅՔ

ՄԱՐՈՒՅԼ

Յ. Գ. Թէև երկու օր վերջը կրկին գացի. բայց
իմաց տուին ինձ թէ — այս օրեր ջիղերը բռնած
է, և այս երեկոյ հեռանալով Մարսէյէն իրեն
հետ տեսներու բարեբաղդութիւնը չ'ունեցայ:

ՆՈՅՆ

... Խմբագիր «Դանուբ» անկողնակալ հանդիսի:

Սրբոց Վարդանանց հանդիսի օրն համառօտ ճառ մը
արտասանելու պատիւն ունեցայ, որոյ նիւթն ո՛չ միայն
Ռուսոնովի դպրոցն՝ այլ ընդհանուր առմամբ Պուլկարա-
բնակ Հայոցս բոլոր դպրոցներու յառաջդիմութեան եւ յե-
տադիմութեան գլխաւոր պատճառներուն նկատմամբ էր:

Սակայն ցաւ 'ի սիրտ կ'ըրեմ որ Մեծ. Հանդիսական-

ներէն ոմանք՝ կամ սխալ հասկացողութեամբ եւ կամ
քմահաճութեամբ խեղաթիւրելով մեր ճառին նիւթը՝
աստ եւ անդ զիս բամբասած են. իբր թէ մինչև ցարդ
աղղին վրայ գրամա մնացած է. իբր թէ Ռուսոնովի
արհամարհած եմ. իբր թէ օրուան նիւթէն չեղած եմ...:

Ահա Տէր-Խմբագիր, սոյն անտեղի առարկութեանց
պատճառաւ է որ կուգամ ճշմարտութեան պաշտպան եղող
«Դանուբի» ամանց մին խնդրել եւ որոյ միջոցաւ, իմ
աղնիւ Ռուսոնովի եւ բոլոր Պուլկարաբնակ աղգայնոցս
զուշ եւ զօրութիւն հրաւիրել առ 'ի քննութիւն արտա-
սանած ճառիս՝ յորում ո՛չ բամբասանք, ո՛չ բասիրք, այլ
արդարութիւն եւ ճշմարտութիւն ակներեւ կը փայլին:

Տնօրէն-Դանուբ Ս. ՄԷՐԻՎԵԼՆ

1892 ՓԵՏՐ 13 ՌՈՒՍՃՈՒԳ

ԴՂԵԿԻ

Գ. ՕՎԱՃԳԵԱՆ

«Տեարք Հանդիսականք,

«Այո հիանալի տիեզերքին մէջ՝ ամեն բան իւր տե-
սականն ունի. երկնից հաստատութեան մէջ աստղունք
իրենց տեսականն ունին. երկրիս վրայ ալ կենդանիք,
բուսականք եւ արուեստք իրենց տեսականն ունին:

Ուստի քանի որ ամէն շնչաւոր եւ անշունչ գոյութիւնք
իրենց տեսականն ունին, ապա ուրեմն դպրոցն ալ իւր
այլազան տեսականն ունի. որք գլխաւորապէս երեքի
կը բաժնուին. Նախնային, Ուսումնային եւ Համալսա-
լան:

Սոյն երեք գլխաւոր վարժարաններն ալ իրենց այլ
եւ այլ տեսականն ունին. զոր Ձեզ մի առ մի բացատ-
րել՝ եւ երկարարանելով զՁեզ ձանձրացնել չեմ ուզեր,
նախ որ Ձեզմէ շատերը արդէն գետեն. երկրորդ՝ մենք
Հայերս չ'ունինք ո՛չ այն հոյակապ շէնքերով կառու-
ցեալ ողջապահիկ վարժարաններն, ո՛չ այն երեւելի գիտ-
նական վարժապետները եւ ո՛չ ալ նոյն վարժապետաց
մեծամեծ ամսականներ տալու կամքն ու կարողութիւնը:

Արդ գանք մենք մեր փոքրիկ վարժարանին այս տար-
ուան Յոբէրգի ուղղութեան որ արդի կացութեան մէջ
ունի մի ծաղկոց՝ մէկ տարուան չըջան. նախակրթարան
չորս տարուան չըջան. ունի ուսումնարան երկու տար-
ուան չըջան. աշակերտք կ'ընդունուին 6 տարեկան. որք
եթէ տարուէ տարի կարգ անցնին 6-7 տարուան միջոցի
մէջ կրնան չըջանաւարտ լինիլ՝ եւ 13-14 տարուան հա-
սակի մէջ դպրոցէն ելնել:

Տեարք, Պուլկար տղան երբ դպրոց կ'սկսի իւր մայ-
րենի լեզուն գիտնալով հանդերձ՝ չորս տարի նախակրթ-
արանի մէջ կը նստի առանց օտար լեզու մը սորվելու.
Իսկ Հայ տղան երբ դպրոց կ'սկսի իւր մայրենի լեզուն
չ'գիտնալով հանդերձ՝ Նախնային երկրորդ տարիէն
Հայերէնի հետ կ'սկսի Պուլկար եւ օտար լեզուներ եւս
սորվելու. ինչ մեծ հակապատկեր ընթացք. մեր եւ Պուլ-
կար նախակրթարանի միջեւ:

Եթէ Պուլկար տղուն համար չորս տարի հարկ է՝ Նա-
խնային մէջ աւանդեալ ուսմունքները սորվիլ, ա-
ռանց օտար լեզու մը սորվելու, ինչո՞ւ համար Հայ տը-
ղուն չի տրուի չորս տարի՝ առանց ուրիշ լեզու մը սոր-

վելու. ինչո՞ւ համար է տարի ալ չ'տրուի օտար լեզու սորվելուն հետ իւր Հայերէնն աւելի յառաջ մղելու:

Տեսարք, առանց մեծամեծ խօստուգներով զձեզ խաբելու կ'ըսեմ պարզապէս թէ, մեր Ս. Մեսրոպեան վարժարանի նպատակն է, ո՛չ թէ գրագէտներ, Աստուածաբաններ եւ մասնագէտներ պատրաստել, այլ Հայ զաւակունքը Հայկական կրթութեամբ կրթել, Հայերէն ուսմանց եւ գիտութեանց հետ տեղական եւ Եւրոպական մի առաջնակարգ լեզու ուսուցանել:

Ազգութեան զգայուն մտնոց սրտին մէջ զարգացնել, Հայաստանեայց եկեղեցւոյ սկզբունքն պահպանել եւ Հայերէն լեզուն օտար լեզուներէ աւելի նախապատել եւ հիմն համարելով դաստիարակել:

Տեսարք, մեր Պուլկարազնակ ազգային՝ Պուլկարիոյ պէս սահմանադրական եւ ազատ երկրի մէջ՝ ունի ազատութիւն իւր կրօնին հետեւելու եւ Հայկական դաստիարակութեամբ կրթելու իւր զաւակունքը. մեր ազգը ունի լուսաւորութեան միտում եւ ազգային պատւոյն եւ իրաւանց նախանձախնդրութիւն. ուրեմն կը հարցնեմ այսպիսի ազգի մը ինչ կը պակսի յառաջդիմելու. ո՛չ ապաքէն կամք եւ գործ. ունի՞մք արդեօք կամք եւ գործ.— այո՛, սակայն թող ներուի ինձ ըսել թէ ունեցած կամքերնիս եւ գործերնիս միայն մեր անձնական շահուն համար է. ոչ թէ ազգին օգտին համար, հետեւաբար սխալ է ունեցած կամքերնիս ազգային յառաջդիմութեան համար:

Խօսքերնիս եւ նպատակնիս բոլոր Պուլկարազնակ Հայոց դպրոցներն ըլլալով՝ ամենքս ալ կ'ուզենք որ մեր դպրոցներն յառաջդիմեն, արդարեւ նուիրական է այս ձայն, ժողովրդական է այս ձայն. ուստի երբ ժողովուրդը կ'ուզէ Աստուած կ'ուզէ. բայց ինչո՞ւ համար մեր դպրոցներ մեր փափաքին համեմատ չեն յառաջդիմելու եւ դպրոցին համար ունեցած կամքերնիս ապարդիւն կը մնայ եւ շատ անգամ ընդհանուր դժգոհութիւն մը կը տիրէ ժողովրդեան վրայ: Հոս անաչառապէս խօսելու պարտքերնիս ըլլալով՝ սակաւ ինչ Ձեր ուշադրութիւնը կը խնդրեմ հետեւեալ ճշմարտութեանց մասին զորս կուգամ թուել:

Ա. Ու՛ր ուրեք ըլլայ, դպրոց մը չի կրնար յառաջդիմել, երբ իւր պիտոյից համար նիւթական չ'ունի (ստակ):

Բ. Ու՛ր ուրեք ըլլայ դպրոց մը չի կրնար յառաջդիմել, երբ օրինաւոր հոգաբարձութենէ զուրկ է:

Գ. Ու՛ր ուրեք ըլլայ, դպրոց մը չի կրնար յառաջդիմել երբ չ'ունի օրինաւոր, խոհեմ եւ գիտնական ուսուցիչներ:

Դ. Դպրոց մը չի կրնար յառաջդիմել. երբ դպրոցին մէջ Տնօրէն դասատու չ'կայ եւ կամ գտնուող Տնօրէնին վրայ վստահութիւն չ'կայ. այն ատեն անշուշտ նոյն վարժարանի ուսուցիչը իրեն Տնօրէն դասատու իրենց խելքին փշածին պէս պիտի վարուին:

Ե. Դպրոց մը չի կրնար յառաջդիմել՝ երբ օրինաւոր եւ գործադրելի կանոնադրութիւնը միայն պատին վրայ առկայ կը կենայ:

Զ. Դպրոց մը չի կրնար յառաջդիմել, երբ աշակերտն գեռ չ'ընտանաւորտ չ'եղած դպրոցն կ'իլլէ եւ կամ իւր

մայրենի լեզուին գեռ հիւմ չի դրած օտար լեզուներ կ'ըսկսի սորվիլ:

Է. Դպրոց մը չի կրնար յառաջդիմել երբ ազնիւ ծընողք կը չ'փացնեն իրենց զաւակունքը եւ որ եւ իցէ կերպով առ Դասատու ունեցած յարգանքնիս կը վիրաւորեն եւ որով նոքա անզուսպ եւ անտանելի աշակերտներ կը դառնան:

Ը. Եւ վերջապէս ու՛ր ուրեք ըլլայ, դպրոց մը չի կրնար յառաջդիմել. երբ թաղականք գէպ արեւելք կը քաշեն, հոգաբարձուք արեւմուտք. ժողովուրդք գէպի հիւսիս եւ վարժապետք գէպի հարաւ առանց զիրեարս լաւ հասկնալու:

Տեսարք, ա՛հա ասոնք են ազգի եւ դպրոցի մը խանգարման եւ յետադիմութեան իսկական պատճառներն, երբ վերոյիշեալ անժխտելի պատճառներն մին կամ երկուքը պակսի, դպրոցին ալ ներդաշնակ ընթացքը կ'աւրի եւ կսկսի կաղն ի կաղն ընթանալ:

Որովհետեւ կը տեսնես երբեմն, հոգաբարձու ունինք, վարժապետ չ'ունինք, վարժապետ ունինք նիւթական չ'ունինք, ամեն տարի մէյ մէկ արգելքներ եւ փորձանքներ կ'ելնէ, կը նայիս այս տարուան հոգաբարձութիւնը նոր եռանդով նոր ծրագրեր մը կուզէ, նոր մէթոտով ծրագիր կը շինուի, Կ. Պօլոյ կրթական խորըրոյ ծրագիրներուն հետեւելով որ աւելի Գաղղիական է քան Գերմանական, հողիւ տարին կը բոլորէ այն հոգաբարձութիւնը կամ մասամբ կամ ամբողջապէս կը հրաժարի, ամիսներ անցնելուն վերջը տեղն ուրիշ հոգաբարձութիւն մը կ'ընտրուի. նա ալ կ'ուզէ ուրիշ մի կերպ ծրագրել: Ինչ ընելու է. պաշտօնէից եւ հոգաբարձուաց յարաւերակութիւն չ'կայ. անցեալ տարի երկու անգամ հրաժարեցաւ հոգաբարձութիւնը եւ երկու անգամ ալ վարժապետ փոխուեցաւ. ո՞վ է մեղաւոր. ազգը, հոգաբարձուն թէ վարժապետը. — անշուշտ խեղճ վարժապետը:

Այս տարի ալ կարծեցինք հանգիստ պիտի վարէինք մեր պաշտօն, սակայն ոչ, այս տարի ալ սերիշ յորձանքներու փորձանքներու հանդիպեցանք. այսպիսի տարտամ ընթացքներով դպրոց կը յառաջդիմէ՞. ազնիւ ընթերցող, դու գատէ՛:

Ինչ կրնայ ընել պարտիզպան մը, երբ մշակ կայ, ջուր չ'կայ, երբ ջուր կայ արեւ չ'կայ. ինչ կրնայ ընել քաջ զօրավար մը, երբ զօրք կայ, հրացան չ'կայ, երբ հրացան կայ, վառօթ չ'կայ: Աստուած բնութիւնը կարգապահ եւ ներդաշնակ ընթացքի մէջ նախասահմանած է. միթէ մենք աններդաշնակ եւ անյարատու ընթացքներով հրաշքնե՞ր գործել կ'ուզենք. — չարաչար կը սըխալինք:

Ուստի այն որ ազգային հատատութեան մը, եկեղեցւոյ կամ վարժարանի պաշտօնատար կամ գլուխ կը կանգնի, ո՛րք եւ լինի նա. կաթողիկոս կամ քահանայ, թաղական կամ հոգաբարձու, վարժապետ կամ տնօրէն, որք իրենց պարտաւորութիւնները կատարելու անբաւական են՝ պատասխանատու են յանցաւոր են առաջի Աստուծոյ եւ ազգին, սրովհետեւ այն ատեն նոյն հաստատութիւնը կսկսի կ'աղալ, եղած ծախքերը պարապի երթալ եւ ազգը վնասուել թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս:

Ուրեմն Տեառք. կարգապահութեամբ, ներդաշնակութեամբ եւ յարատեւութեամբ բնականաբար եմք՝ վասն զի առանց կարգապահութեան, ներդաշնակութեան եւ յարատեւութեան չ'կայ յառաջադիմութիւն:

Ահա այս փափաքով միայն ըզձալի է ինձ վերջացնել խօսքերս ըսելով թէ՝ Ձեր զաւակաց յառաջադիմութիւնը իմ երջանկութիւնս է եւ Ձեր ժողովրդական սէրն ալ իմ վարձատրութիւնս:»

Գ. Օ.

ՏԵՂԱԿԱՆ

—o—

Տեղոյս արական Ազգային վարժարանի հոգաբարձութիւնը իր հրաժարականը տուած լինելուն պատճառաւ ամսոյս 1ին կիրակի օր յետ աւարտման եկեղեցւոյ, Ազգ. խորհրդարանի մէջ նոր ընտրութիւն եղած եւ քուէի առաւելութեամբ հետեւեալ ազգայինք ընտրուած են վարժարանի հոգաբարձութեան պաշտօնի Տեառք. Յարութիւն Երամօֆ, Ստեփան Գառնարեան, Յովհաննէս Սաբաֆեան, Երուանդ Քիւրաեան եւ Ծարուկ Խաչումեան:

Կը մաղթեմք յարատեւութիւն եւ կարողութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՉԱԿՆՔԵԼՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

(Շաբաթ-հինգ 11րդ թիւին)

Սոյն արտածման տեսարանին հետեւեալ օրք, զինուոր բերուեցաւ թեմին տեսանք. միակ վարչութիւն քաղաքային եւ զինուորական 'ի գիւղն. որ չէր ճանչնար երբէք հանրապետական կառավարութիւնն, եւ յորում արքայական կառավարութիւնը պաշտօնեայ չ'ունէր: Զինուորը նորատի հովուին սպանման առթիւ հարցաքննուելու առնն, զինքն անկեղծաբար յանցաւոր յայտարարեց եւ զինքը արդարացնելու համար ըսաւ թէ ապստամբ երկրէ մը միայնակ անցնելուն պատճառաւ, ուր ամէն վայրկեան ծանր վտանգներ իրեն կը սպառնային, եւ տեսնելով որ մարդ մը ծառի մը ետեւ պահուրտած տուրկայ մը կ'ուղղէր իրեն, զոր չէր կրցած որոշել, ինքզինք պաշտպանելու բնագոյնը գործածել տուած էր իւր զէնքը նորա զէմ. եւ յարեց թէ մահու չափ կը ցաւի ճարտար հրացանածիդ լինելուն համար, բայց հնազանդիլ ուզած էր վտանգէ մը փախչելու զաղափարին:

Սոյն անձնապաշտպանութիւնն, որոյ ճշմարտութիւնը բազում վկայիւք հաստատուեցաւ. սպանչին դատաւոր եղող պարկեշտ մարդիկը տարակուսանաց մէջ ձգեց. իւրեանց խիղճը կ'ըսէր իրենց թէ չեն կրնար դատաւարտել մենաւոր ճամբորդ մը. որ ինքզինք մահուան վտան-

գին մէջ կարծելով անկեղծութեամբ, մահուանէ փախած է՝ սպաննելով նախադարձակը: Միւս կողմանէ, սննդեւս եւ սիրելի յատկութեամբ օժտեալ նորատի մը արիւնն հոսած էր, զորին հայրը կ'արձուկէր աղաղակներ որ կը կեղեքէին դատաւորաց սիրտն, եւ անոնցմէ ոչ մին չէր կրնար որոշել անպարտ արձակել ծերունւոյն որդին ըսպաննողը: Դատաւարտելու կամ անպարտ արձակելու անհարկութեան մէջ մնացող սոյն տեսանն որոշում մի տուաւ, որ կը յայտնէր առնականաց հոգւոյն պարզութիւնը, բայց կ'արդարացնէր, յանձին յանցապարտին, հանրապետական զինուորաց եղբայրութեան այն առելի յատկութիւնը, որք միշտ եւ ամէն պարագայի մէջ Վանտէյիները սպաննել իրենց զուարճութիւն եւ խաղ մը ըրած էին: որոշեց որ սպաննիչն Հայր Պիկուանի ձեռքը արուի, եւ նա ազատ լինի ըստ իւր խտտութեան կամ գթութեան դատել, պատժել կամ կեանքը չնորհել:

ԹԱՐԳՄԱՆԵՑ Գ. Ֆ.

(Շաբաթ-հինգ)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիզի «Արձագանք» լրագրոյ 21րդ. համարի մէջ կը կարդանք հետեւեալը:

«Կարս լրագիրը հայտնիւմ է, որ այս տարուայ Ապրիլի 14-ին Ղարսում Երեանի նահանգական դատարանի քրէական բաժինը պէտք է քննէ Պ. Պ. Սարգիս Կուկուեանցի, Սահակ Յարութիւնեանցի Կոնստանդին Լիսինեանի եւ այլ քառասուն Հայերի գործը. որոնք մեղադրուում են թէ մի խումբ կազմելով, սպաննութիւններ են կատարել եւ ընդգրկմացել են իշխանութեան ներկայացուցիչներին: Այս դատը կը տեւէ 10-15 օր: Նախագահելու է Պ. Բակալով՝ Երեանի նահանգական դատարանի նախագահը»:

«ԱՐՁԱԳԱՆԿ»

ԶԻՆԱԿԱՆ ԱՌԱՐՆԵՐ

— Կանանց լեզուն իրենց զէնքն է. զոր երբէք չեն թողուր որ փթնայ:

— Մանկամարդ աղջիկը ծաղիկ մ'է, մանկամարդ կինը պտուղ մ'է. եթէ պտուղը դէշ ելնէ, ինչ յիշատակ կը մնայ ծաղիկէն:

— Որչափ կին մը սիրէ իւր ամուսին, այնչափ կ'ուղղէ անոր պակասութիւններն. որքան ամուսին մը սիրէ իւր կին, այնքան կը չատցնէ անոր այլանդակութիւնները:

— Որդին գովելը պարծենալ է. հայրը պախարակելը ինքզինքը անպատուել է:

ԱՅԼԵԻԱՅԼԻՔ

Ա. Ք. Ք. — Գեղեցիկ զաւակ ծնելն աւելի դժուարին է գեղեցիկ բնութեամբ զաւակ զարգացունել: Գեղեցկութիւնն երկար ժամանակ չի մնար մարդուս վրայ, և երջանիկ չընեն ո՛չ ունողն և ո՛չ ուրիշն. իսկ բարի բարք և բնաւորութիւն. մինչև ցովախճան օգտակար կը լինին թէ ախրոջն և թէ՛ սյրում:

Յայտնի է թէ մարդ չի համարուիր վատարարոյ և անկիրթ եղողը: Տղայ մը ինչպէս լեզուն նոյնպէս և լաւ կրթութիւնն ու բարեբարոյութիւնը կ'ուսանին:

Մարդուս վերայ առաջին կրթութիւնը կը տարւանայ. առաջին կրթութիւնը մարդուս հետ կ'երթայ մինչև գերեզման: Ծնողք պարտին գիտնալ զայստիկ և ըստ այնմ վարուիլ: Երբ տղայ մը կ'սկսի ճանաչել ծնողքն, և քաղցր ու բարի վարմունք կը տեսնէ ծնողացը վրայ, ինքն ալ կը հետեի նոցա օրինակին, և աստիճանաբար համեստ, պարկեշտ և քաղցրաբարոյ կը լինի: Ծնողաց ընթացքն ու գնացքը մեծ ազդեցութիւն ունին որդւոյ վրայ: Մինչև իսկ ստեղծելի մանկան սննդեան և առողջութեան վերայ կը ներգործէ մօր մը քաղցր ու գեղեցիկ շարժումնքն, բազում փորձերով և օրինակներով հաստատուած է՝ մանկանց վերայ օտար ստնտուաց ու մանկատաճներու բնաւորութեանց ազդելն: Ծնողք պարտին ամենայն խնամով և զգուշութեամբ ընտելել իւրեանց որդւոյ կրթութեան ու ուսման համար պէտք եղած վարժարաններն: Պէտք չէ տղայքն այլոյ և մինչև տնեցւոյ. առջև խրատել կամ՝ յանդիմանել, այլ առանձին և քաղցրութեամբ: Պէտք է նոցա քով զգուշութեամբ խօսիլ, նոցա քով չի հագուել բարի բարք և վարք անսպառ. գանձ են: Ծնողք եթէ երբէք մեծ հարստութիւն ալ թողուն, ո՛չինչ կ'օգտին իւրեանց որդւոյ՝ եթէ կրթութեամբ ու դաստիարակած չեն: Բարի կրթութիւն և դաստիարակութիւն կը հարստացունեն աղքատիկ ծնողաց զաւակները: Պէտք է աշխուրջ զբաշուել միշտ որ տղայք վատարարոյ մարդոց քով չ'գտնուին:



Մի ազգային կը յայտարարէ թէ ունի ծախու համար իր մօտ Խաչատուր Աբովեանցի «Վէ՛ր» ՀԱՅԱՍՏԱՆԻ» անուն գիրքը նոր եւ ընտիր կազմուած, տպեալ ի Թիֆլիս 1858 թ. այժմ բոլորովին սպառուած է և գրադարանի մը ամենաբարձր տեղը կը բռնէ:

Փափաքողք պարտին դիմել խմբագրութեան հասցէին:

ՆՈՐ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի ՊԷՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Կ. Ս. ՀԱՃԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Նախկին աշակերտ Պետրոսեան
վարժարանի ի Պոլիս

ԲՈՒՍՃՈՒԳ

ՏՊԱԳՐ. Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻՅԻ

Ազգ. վարժարանաց համար պիտանի մի գրքոյկ է. կը յանձնարարեմք մեր ամեն տեղի Պատ. Դաստիարակաց որ նախակրթարանի աշակերտաց գաղափար մը տալու համար բնագիտութեան վրայ, քաջալերեն մեծարոյ հեղինակին սոյն փոքրիկ գործն:

Կը վաճառի հեղինակին մօտ. գին 1 ֆր:

Փափաքողք պարտին դիմել հետեւեալ հասցէին՝

Mr. G. Hadji Stepanian

(BULGARIE)

CHOUMLA

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»-ի խմբագրատան մէջ. իրենց առջև նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ԲԱՅՅԻ, ԽԵՆԹԸ (Արկածներ վերջին Ռուս-թուրքական պատերազմից) և ԶԱՅԱՅԻՎԻՆ (Մի պատկեր նրա արչաւանքից). երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ. Տիպ. 8 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ 5 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ՄԻՆԸ ԱՅՍՊԷՍ, ՄԻԻՍԸ ԱՅՆՊԷՍ Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից: 4 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅՄԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ Պատկերը խոշորագիրը. 2 ֆր:

» » աւելի փոքրը. 1 ֆր:

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻՅԻ

ԲՈՒՍՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻՅԻ

Скоро-печатница на Спиро Гулабчев.